ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ խորհրդի կողմից
Արձանագրություն 225 առ 15/02/2023

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է
01 ապրիլի 2023 թվականից

Կոդ՝ 04.25.01
Խմբագրություն՝ 1.0



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 5
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ 5
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ 6
6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 6
7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 11
8. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ 15
9. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ 16
10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 17
11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 17
12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 17

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Երաշխիքի տրամադրման սույն կանոնները (այսուհետ նաև՝ Կանոններ) սահմանում են երաշխիքի տրամադրման պայմանագրերի/վկայագրերի կնքման, կատարման և դադարեցման ընդհանուր պայմանները և կարգը:

1.2. Երաշխիքի տրամադրման սույն կանոնների, ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 9-ի «Երաշխիքի տրամադրման դասով ապահովագրական ընկերությունների գործունեության սահմանափակման և իրականացման հատուկ կարգ նախատեսելու մասին» թիվ 343-Ն որոշման հիման վրա «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ նաև՝ Ապահովագրող) կնքում է երաշխիքի տրամադրման պայմանագրեր ինչպես գործունակ ֆիզիկական անձանց, այնպես էլ ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հիմնարկների հետ (այսուհետ նաև՝ Ապահովադիր):

1.3. Կանոնները մշակված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և հանդիսանում են Կանոնների հիման վրա կնքված երաշխիքի տրամադրման վկայագրի/պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հավելյալ և անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի, Ապահովադրի (այսուհետ միասին՝ Կողմեր), ինչպես նաև Շահառուի համար:

1.4. Կանոնների հիման վրա «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ապահովագրող) իրականացնում է ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրության երաշխիքի տրամադրման դասով:

1.5. Երաշխիքի տրամադրման վկայագրի/պայմանագրի կնքման ժամանակ և/կամ դրա գործողության ընթացքում Կողմերը կարող են գրավոր ձևով պայմանավորվել Կանոնների առանձին դրույթների փոփոխության (չկիրառման) և/կամ Կանոններով չնախատեսված լրացուցիչ դրույթների կիրառման մասին:

1.6. Կանոնների և վերջինիս հիման վրա կնքված Պայմանագրի միջև տարընթերցումների դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին:

1.7. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրված անձին ծանոթացնել Կանոնների և Պայմանագրի պայմաններին և բովանդակությանը, ինչպես նաև դրանցով նախատեսված պարտականությունների անվերապահ կատարման մասին: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից և Ապահովագրված անձից պահանջելու կատարել Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտականությունները: Ապահովագրված անձն Ապահովադրի հետ հավասարապես կրում է Կանոններով և/կամ Պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունների չկատարման կամ թերի կատարման համար պատասխանատվությունը, այդ թվում՝ այդ պարտականությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը:

2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կանոններում օգտագործվող տերմինները և հասկացությունները կիրառվում են դրանց՝ Կանոններով տրված սահմանումներին համապատասխան: Կանոններով չսահմանված տերմինները կիրառելի են դրանց ուղղակի լեզվական նշանակությամբ, եթե դրանց նշանակությունը օրենսդրական կամ ենթաօրենսդրական իրավական ակտերով պարզաբանված չէ:

2.2. **Ապահովագրող**՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:

2.3. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած անձ:

2.4. **Շահառու**՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցումը ստանալու իրավունք ունեցող անձ:

2.5. **Ապահովագրության պայմանագիր** (այսուհետ՝ Պայմանագիր կամ Վկայագիր)՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև գրավոր համաձայնություն, որի հիման վրա Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով նախատեսված և Պայմանագրով նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին (Շահառուին) վճարել ապահովագրական հատուցում, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

2.6. **Ապահովագրական ռիսկ**՝ առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ օժտված ենթադրելի իրադարձություն, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է ապահովագրության պայմանագիրը:

2.7. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած, Պայմանագրով և Կանոններով նախատեսված որևէ դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

2.8. **Ապահովագրական գումար**՝ Պայմանագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վճարել ապահովագրական հատուցում:

2.9. **Ապահովագրական հատուցում**՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի և Կանոնների հիման վրա, Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում Շահառուին վճարման ենթակա գումար:

2.10. **Ապահովագրավճար**՝ Պայմանագրով սահմանված չափով, պայմաններով և ժամկետներում Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

2.11. **Ապահովագրական սակագին**՝ ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Համաձայն Կանոնների՝ Պայմանագրով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի կամ Շահառուի, Օրենքին կամ այլ իրավական ակտերին չհակասող, գույքային շահերը, որոնք կապված են Շահառուի նկատմամբ Ապահովադրի պայմանագրային պարտավորությունների կամ Շահառուի կողմից հայտարարված մրցույթի (մրցութային բանակցությունների) ընթացքում ծագած պարտավորութունների խախտման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

4.1. Կանոնների համաձայն ապահովագրական պատահար են համարվում այն իրադարձությունները (բացառությամբ Կանոնների 4.2 կետով սահմանված դեպքերի), որոնք հետևանք են Ապահովադրի կողմից պայմանագրային պարտավորությունների կամ Շահառուի կողմից հայտարարված մրցույթի (մրցութային բանակցությունների) ընթացքում ծագած պարտավորութունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, այդ պարտավորությունների կատարումից Ապահովադրի միակողմանի հրաժարման, պայմանով, որ ՝

- վնասը պատճառվել է Պայմանագրի գործողության ընթացքում,
- գոյություն ունի անմիջական պատճառահետևանքային կապ հատուցման ենթակա վնասի և պատահարի միջև,
- տվյալ պատահարի հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայտը ներկայացվել է օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

4.2. Ապահովագրական պատահար չեն համարվում հետևյալ իրադարձությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի հետևանք են.

4.2.1. մինչև պայմանագրի կնքումը Ապահովադրին հայտնի փաստի, իրադարձության կամ պատահարի կամ Ապահովադիրը պետք է ակնկալեր, որ դրանք կարող են բերել իր նկատմամբ հայցի ներկայացման,

4.2.2. պատահարի առաջացմանն ուղղված Ապահովադրի կանխամտածված, դիտավորյալ կամ հանցավոր գործողության կամ անգործության, Օրենքի, իրավական ակտի նորմի կամ նորմատիվային փաստաթղթի կոպիտ խախտման,

4.2.3. Պայմանագրի կնքման պահին կամ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ կեղծ և ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող տեղեկատվության ներկայացման,

4.2.4. պատահարի առաջացման վերաբերյալ Պայմանագրով և (կամ) Կանոններով սահմանված կարգով և ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին չտեղեկացման կամ Ապահովագրական հատուցման վերաբերյալ

որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության կամ փաստաթղթի չտրամադրման կամ պատահարի առաջացման պայմանների, բնույթի կամ վնասի չափի որոշման աշխատանքներում Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի գործողություններին խոչընդոտման,

4.2.5. ահաբեկչական գործողությունների, պատերազմի, ռազմական գործողությունների, ինչպես նաև ռազմական հնարքների, զորաշարժերի և/կամ այլ ռազմական միջոցառումների,

4.2.6. քաղաքացիական պատերազմի, ցանկացած բնույթի քաղաքացիական ընդվզումների, խռովությունների կամ գործադուլների,

4.2.7. պետական մարմինների հրահանգով գույքի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու կամ ոչնչացնելու,

4.2.8. Օրենքի, այլ իրավական ակտերի կամ Պայմանագրի համաձայն ապահովագրական հատուցումը բացառող հանգամանքների:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

5.1. Ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրական հատուցումը վճարելուց հետո Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը (պատասխանատվության սահմանաչափը) նվազեցվում է կատարված ապահովագրական հատուցման չափով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

6.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա:

6.2. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել Ապահովագրողի կողմից Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա կազմված ապահովագրության վկայագիրը Ապահովադրին տրամադրելու միջոցով:

6.3. Ապահովագրության պայմանագիրը կազմվում է գրավոր և կարող է կնքվել մեկ փաստաթղթի կազմման կամ Ապահովագրողից Ապահովադրին նրա գրավոր դիմումի հիման վրա Ապահովագրողի ստորագրությամբ ապահովագրական վկայագրի (վկայականի կամ այլ փաստաթղթի) շնորհման ճանապարհով:

Ապահովագրության Պայմանագրի կնքման դեպքում Ապահովագրողը Ապահովադրին պարտավոր է տրամադրել սույն Կանոնները կամ սույն Կանոններից քաղվածք, որոնք ստեղծվել են սույն Կանոնների դրույթների հիման վրա և վերաբերվում են ապահովագրության կոնկրետ ծրագրին (ապահովագրական պրոդուկտին), և որի հիման վրա էլ կնքվում է Պայմանագիրը (այդ մասին նշվում է Պայմանագրում):

Սույն Կանոնները Ապահովադրին կարող են տրամադրվել ինչպես թղթային տպված տարբերակով (այդ թվում՝ գրքույկի տեսքով), այնպես էլ համացանցում Կանոնների էլեկտրոնային հասցեն (URL) տրամադրելու, կամ Կանոնների ֆայլը Ապահովադրի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկման միջոցով, կամ թվային կրիչներով (CD, DVD, և այլն), կամ Ապահովագրողի պաշտոնական www.ingoarmenia.am կայքում Կանոնները տեղադրելու միջոցով:

Եթե կանոնները տրամադրվել են այլ եղանակով, քան թղթային տեքստն է, Ապահովադիրը (Շահառուն) չի ազատվում սույն Կանոններով նախատեսված ոչ մի պարտավորությունից: Ապահովադիրը ցանկացած ժամանակ իրավունք ունի դիմել Ապահովագրողին և ստանալ Կանոնների թղթային օրինակը:

6.4. Ապահովագրողն Ապահովադրի գրավոր (բանավոր) դիմումը ստանալուց հետո իրավունք ունի նրանից պահանջել լրացուցիչ տվյալների տրամադրում՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված այն հանգամանքների հետ, որոնք նշանակություն ունեն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա տեղի ունենալու դեպքում վնասի հնարավոր մեծության որոշման համար:

6.5. Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով պարտավոր է տրամադրել.

6.5.1. Ֆիզիկական անձ Ապահովադրի անձնագիր,

6.5.2. Իրավաբանական անձ Ապահովադրի հիմնադիր փաստաթղթեր,

6.5.3. Ապահովադրի կամ նրա անունից հանդես եկող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթ,

6.5.4. Ապահովադրի ներկայացուցչի կարգավիճակը և լիազորությունների ծավալը հաստատող լիազորագիր կամ այլ փաստաթուղթ,

6.5.5. Երաշխիքի տրամադրման շրջանակներում Ապահովադրի պարտավորությունները սահմանող փաստաթուղթ,

6.5.6. Ապահովագրողի պահանջով ապահովագրական շահը հաստատող փաստաթղթեր,

6.5.7. Ապահովագրական ռիսկը գնահատելու համար Ապահովագրողին անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

6.6. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին տեղեկացնել իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

6.7. Եթե ապահովագրության պայմանագրի կնքումից հետո հայտնի դառնա, որ Ապահովադիրը տրամադրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է դրանք, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, միակողմանի դադարեցնելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իր կրած ծախսերը:

6.8. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրության պայմանագրի կնքման հայտը (չկնքել կամ վերակնքել ապահովագրության պայմանագիր):

6.9. Ապահովագրավճարի չափը, վճարման կարգը և ժամկետները սահմանվում են Պայմանագրով:

6.10. Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի չափը որոշելիս բազային ապահովագրական սակագնի նկատմամբ կիրառել նվազեցնող կամ բարձրացնող գործակիցներ:

6.11. Տարաժամկետ վճարման կարգ սահմանող պայմանագրերի դեպքում Ապահովագրողը իրավունք ունի ապահովագրական հատուցումը վճարել միայն պայմանագրի ամբողջ ժամկետի համար ապահովագրավճարի վճարումից հետո:

6.12. Ապահովագրավճարը անկանխիկ եղանակով վճարելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է վճարման հանձնարարականում հղում կատարել հաշվի համարին և ամսաթվին, որի հիման վրա կատարվում է ապահովագրավճարի վճարումը, և/կամ ապահովագրության պայմանագրի (վկայագրի) համարին, որի համար իրականացվում է ապահովագրավճարի վճարում:

6.13. Անկանխիկ եղանակով վճարելու դեպքում ապահովագրավճարը համարվում է վճարված Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտքագրվելու պահին:

6.14. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը նվազեցնել չվճարված ապահովագրավճարի չափով:

6.15. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չծանուցել այդ մասին Ապահովադրին, միակողմանի դադարեցնել Պայմանագիրը, և ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

6.16. Ապահովագրողը իր հայեցողությամբ իրավունք ունի սահմանել ապահովագրավճարի վճարման լրացուցիչ ժամկետներ և այդ մասին ծանուցել Ապահովադրին: Լրացուցիչ ժամկետի սահմանման դեպքում Ապահովագրողը միևնույն է ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

6.17. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, մեկ տարուց պակաս ժամկետով կնքվող Պայմանագրերի դեպքում Պայմանագրի ապահովագրավճարը հաշվարկվում է ըստ հետևյալ աղյուսակի.

Ապահովագրության ժամկետ ամիսներով	Վճարվելիք ապահովագրավճար տոկոսներով տարեկան ապահովագրավճարի նկատմամբ
1	30 %
2	37 %

3	44 %
4	50 %
5	56 %
6	63 %
7	69 %
8	75 %
9	81 %
10	88 %
11	94 %
12	100 %

6.18. Ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրական հատուցումը վճարելուց հետո Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը (պատասխանատվության սահմանաչափը) նվազեցվում է կատարված ապահովագրական հատուցման չափով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

6.19. Ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում ապահովագրության վկայագրում/պայմանագրում սահմանված ժամկետից:

6.20. Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում՝

6.20.1. ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է,

6.20.2. ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի չափով Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում վճարելու գծով իր պարտավորությունները,

6.20.3. Ապահովադիրը կամ Ապահովագրողը հրաժարվել է պայմանագրից, ընդ որում Կողմերն իրավունք ունեն հրաժարվել ապահովագրության պայմանագրից ցանկացած պահի՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով մյուս Կողմին, պայմանով, որ հրաժարման պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել,

6.20.4. Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս Կողմը թույլ է տվել ապահովագրության պայմանագրի էական խախտում,

6.20.5. ապահովագրության պայմանագիրը լուծվել է Ապահովադրի և Ապահովագրողի փոխհամաձայնությամբ,

6.20.6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Կանոններով և պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

6.21. Ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողը կիրառում է վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկման ստորև նշված երկու եղանակներից որևէ մեկը՝

6.21.1. «Ժամանակին համընթաց» (pro rata), այսինքն՝ Ապահովագրողը համամասնորեն վերադարձնում է ապահովագրության պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը առանց որևէ մասհանումների,

6.21.2. «Կարճաժամկետ» (short term), այսինքն՝ Ապահովագրողը նետտո ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է ապահովագրության պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը: Նետտո ապահովագրավճար է համարվում բրուտտո ապահովագրավճարի և գործառնական և պայմանագրի թողարկման համար կատարվող այլ ծախսերի՝ բեռնվածության տարբերությունը: Բեռնվածության գումարը կազմում է առաջին տարվա ապահովագրավճարի 100%-ը և յուրաքանչյուր հաջորդ տարվա ապահովագրավճարի 80%-ը:

6.22. Կարճաժամկետ եղանակով դադարեցման դեպքում Ապահովագրողի նախընտրությամբ կարող է կիրառվել Բեռնվածության ավելի ցածր մասնաբաժիններ, քան նշված է 6.21.2 կետում, կամ ընդհանրապես որևէ մասհանումներ չկատարվել:

6.23. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Պայմանագիրը համարվում է կնքված «Կարճաժամկետ» դադարեցման սկզբունքով:

6.24. Ապահովագրության պայմանագրի դադարեցման դեպքում Ապահովադիրը պարտավոր է, Ապահովագրողի պահանջի դեպքում, Ապահովագրողին վերադարձնել նրան տրված ապահովագրության վկայագիրը:

6.25. 6.20.3 կետով սահմանված կարգով Ապահովագրողի նախաձեռնությամբ ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, վերջինս Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «ժամանակին համընթաց» մեթոդով:

6.26. 6.20.3 կետով սահմանված կարգով Ապահովադրի նախաձեռնությամբ ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «կարճաժամկետ» մեթոդով, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.27. Ապահովադրի կողմից պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում վճարված ապահովագրավճարները:

6.28. ՏՄ-ի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից կամ Շահառուից կամ Պայմանագրով սահմանված Սեփականատերից տարբերվող այլ անձի անունով, կամ ՏՄ-ն հանվել է հաշվառումից,

6.29. Ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողը կիրառում է վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկման ստորև նշված երկու եղանակներից որևէ մեկը՝

6.30. «Ժամանակին համընթաց» (pro rata), այսինքն՝ Ապահովագրողը համամասնորեն վերադարձնում է ապահովագրության պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը առանց որևէ մասհանումների,

6.31. «Կարճաժամկետ» (short term), այսինքն՝ Ապահովագրողը նետտո ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է ապահովագրության պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը: Նետտո ապահովագրավճար է համարվում բրուտտո ապահովագրավճարի և գործառնական և պայմանագրի թողարկման համար կատարվող այլ ծախսերի՝ բեռնվածության

տարբերությունը: Բեռնվածության գումարը կազմում է առաջին տարվա ապահովագրավճարի 30%-ը և յուրաքանչյուր հաջորդ տարվա ապահովագրավճարի 20%-ը:

6.32. Կարճաժամկետ եղանակով դադարեցման դեպքում Ապահովագրողի նախընտրությամբ կարող է կիրառվել Բեռնվածության ավելի ցածր մասնաբաժիններ, քան նշված է 6.26.2 կետում, կամ ընդհանրապես որևէ մասհանումներ չկատարվել:

6.33. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Պայմանագիրը համարվում է կնքված «Կարճաժամկետ» դադարեցման սկզբունքով:

6.34. ՏՄ-ի Առևանգման, հափշտակման կամ լրիվ ոչնչացման դեպքում ապահովագրության պայմանագրի դադարեցման ժամանակ ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում:

6.35. Ապահովագրության պայմանագրի դադարեցման դեպքում Ապահովադիրը պարտավոր է, Ապահովագրողի պահանջի դեպքում, Ապահովագրողին վերադարձնել նրան տրված ապահովագրության վկայագիրը:

6.36. 6.25.3 կետով սահմանված կարգով Ապահովագրողի նախաձեռնությամբ ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, վերջինս Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «ժամանակին համընթաց» մեթոդով:

6.37. 6.25.3 կետով սահմանված կարգով Ապահովադրի նախաձեռնությամբ ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «կարճաժամկետ» մեթոդով, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.38. 6.25.8 կետով սահմանված հիմքերով դադարեցման դեպքում, եթե Ապահովադիրը ներկայացրել է հիմքերը հավաստող փաստաթղթեր (Օրինակ՝ առքուվաճառքի պայմանագիր), ապա Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «ժամանակին համընթաց» մեթոդով՝ առանց բեռնվածության գումար պահելու:

6.39. Ապահովադրի կողմից պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում վճարված ապահովագրավճարները:

6.40.

7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Կողմերն ու Շահառուն ունեն սույն Կանոնների 7.2 - 7.5 կետերով նախատեսվածին կից Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

7.2. Ապահովագրողը պարտավոր է.

7.2.1. Տրամադրել Ապահովադրին սույն Կանոնները կամ սույն Կանոններից քաղվածք, որոնք ստեղծվել են սույն Կանոնների դրույթների հիման վրա և վերաբերվում են

ապահովագրության կոնկրետ ծրագրին (ապահովագրական պրոդուկտին), և որի հիման վրա էլ կնքվում է Պայմանագիրը (այդ մասին նշվում է Պայմանագրում):

7.2.2. Թողարկել ապահովագրության վկայագիրը:

7.2.3. Ապահովագրության Պայմանագրով և սույն Կանոններով նախատեսված պատահարի տեղի ունենալու դեպքում կայացնել ապահովագրական հատուցման վճարման որոշում կամ մասնակի կամ ամբողջական մերժման պատճառաբանված որոշում համաձայն Պայմանագրով և սույն Կանոններով սահմանված ժամկետների:

7.2.4. Չբարձրաձայնել Ապահովադրի (Շահառուի) և նրա գույքային վիճակի մասին տեղեկատվություն, բացառությամբ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

7.2.5. Ապահովադրի (Շահառուի), ինչպես նաև ապահովագրության Պայմանագիր կնքելու ցանկություն ունեցող անձանց պահանջով պարզաբանել Կանոնների և Պայմանագրի դրույթները, Ապահովագրական գումարի և ապահովագրավճարի հաշվարկման կարգը:

7.2.6. Պահպանել ապահովագրական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

7.2.7. իրականացնել Օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

7.3. Ապահովագրողը իրավունք ունի.

7.3.1. Պայմանագրի գործողության ցանկացած պահի ստուգել Ապահովադրի և Շահառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը, ներառյալ ապահովագրված գույքի վիճակը, և ռիսկի աստիճանի փոփոխության մասին տեղեկատվություն ստանալու դեպքում իրականացնել դրա վերագնահատում, պահանջել Պայմանագրի դրույթների փոփոխություն և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի գանձում ռիսկի աստիճանի փոփոխմանը համապատասխան:

7.3.2. Պահանջել վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը մինչև դրա ժամկետի ավարտը, եթե Ապահովադիրը (Շահառուն) չի համաձայնվում 7.3.1 կետով սահմանված դեպքում լրացուցիչ պայմանների և հավելավճարի հետ, կամ վերոնշյալի կապակցությամբ չի կատարում Ապահովագրողի ցուցումները:

7.3.3. Պահանջել լուծարել ապահովագրության Պայմանագիրը, եթե Պայմանագիրը կնքելուց հետո պարզվել է, որ Ապահովադիրը Ապահովագրողին հայտնել է կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, որոնք ունեն էական դեր պատահարի տեղի ունենալու հավանականության և ռիսկի աստիճանի գնահատման համար, տրամադրել է կեղծ փաստաթղթեր կամ տրամադրված փաստաթղթերում առկա տեղեկությունները կեղծ են եղել կամ անարժանահավատ: Ցանկացած դեպքում էական են համարվում այն հանգամանքները, որոնք նշված են ապահովագրության Պայմանագրում և/կամ հարցաթերթիկում:

7.3.4. Եթե ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրավճարը ամբողջությամբ վճարված չէ Պայմանագրի ամբողջ ժամկետի համար, բայց առկա չէ հերթական վճարումների ժամկետանցություն, Ապահովադրին պահանջ ներկայացնել վճարել Պայմանագրի ամբողջ ժամկետի համար սահմանված ապահովագրավճարը ամբողջությամբ:

7.3.5. Ապահովադրին ամբողջ ապահովագրավճարի վճարման պահանջ ներկայացնելու դեպքում երկարաձգել ապահովագրական հատուցման մասին որոշում կայացնելը մինչև այդպիսի գումարի ստացումը:

7.3.6. ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ապահովագրության Պայմանագրի կնքման համար Ապահովադրի կողմից ներկայացրած անձնական տվյալների մշակում (այդ թվում՝ տարածում, օգտագործում, պահպանում, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրում), ապահովագրական գործունեության իրականացման, ապահովագրական պրոդուկտների մասին տեղեկացման նպատակով, այդ թվում Ապահովադրի հետ ուղիղ կապի դուրս գալու միջոցով կապի միջոցների օգնությամբ, ինչպես նաև այլ նպատակներով՝ չարգելված ՀՀ Օրենսդրությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.3.7. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի միջոցով:

7.3.8. ՀՀ Օրենսդրության համաձայն իրավասու մարմիններին, կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին դիմել՝ ապահովագրական հատուցման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկանքներ ստանալու համար, ինչպես նաև ինքնուրույն անցկացնել ստուգումներ՝ ներգրավելով համապատասխան փորձագետների:

7.3.9. Ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն ապահովագրական պատահարի վերաբերյալ:

7.3.10. Իր հայեցողությամբ մերժել ապահովագրական հատուցման լրիվ կամ մասնակի վճարումը այն ապահովագրական դեպքերի համար, որոնց անմիջական պատճառն է հանդիսացել սույն Կանոններով, օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված նորմերի և կանոնների խախտումը:

7.3.11. իրականացնել Օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

7.4. Ապահովադիրը պարտավոր է.

7.4.1. Ապահովագրողին տեղեկացնել այլ ապահովագրական ընկերությունների հետ ունեցած գործող ապահովագրության պայմանագրերի մասին:

7.4.2. Վճարել ապահովագրավճարը ապահովագրական Պայմանագրով սահմանված ժամկետում և չափով:

7.4.3. Ձեռնարկել բոլոր խելամիտ և նպատակահարմար քայլերը և միջոցները վնասի նվազեցման ուղղությամբ:

7.4.4. Վերացնել ապահովագրական ռիսկի էական մեծացման վրա ազդող հանգամանքները, որոնց վերացման համար Ապահովագրողից ստացել է գրավոր ցուցում:

7.4.5. Մինչև ապահովագրավճարի (դրա 1-ին մասի) հետաձգված (տարաժամկետ) վճարման պահը տեղի ունեցած ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողի պահանջով պահանջի ներկայացումից 10 օրացույցային օրվա ընթացքում կատարել պահանջվող գումարի վճարումը,

7.4.6. Եթե ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրավճարը ամբողջությամբ վճարված չէ Պայմանագրի ամբողջ ժամկետի համար, բայց առկա չէ հերթական վճարումների ժամկետանցություն, Ապահովագրողի պահանջով պահանջի ներկայացումից 10 օրացույցային օրվա ընթացքում կատարել պահանջվող գումարի վճարումը,

7.4.7. Ապահովագրավճարը անկանխիկ եղանակով վճարելու դեպքում վճարման հանձնարարականում հղում կատարել վճարման հաշվի համարի, ամսաթվի և/կամ ապահովագրության Պայմանագրի համարի վրա, որի համար կամ հիմքով կատարվում է վճարումը,

7.4.8. Անմիջապես կամ հայտնի դառնալու պահին, գրավոր ծանուցել Ապահովագրողին էական հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ռիսկի աստիճանի մեծացման վրա ազդող էական հանգամանքներ, ամեն դեպքում, ճանաչվում են ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնած տեղեկություններում փոփոխությունները:

7.4.9. Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը (կամ դրա համապատասխան մասը), եթե բացահայտվել են հանգամանքներ, որոնք օրենքով կամ սույն ապահովագրության Կանոններով ամբողջությամբ կամ մասնակի զրկում են Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցման ստացման իրավունքից:

7.4.10. Առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության Ապահովադիրը իրավունք չունի երրորդ անձանց տրամադրել հատուցում, խոստումներ տալ, վնասների կամավոր հատուցման առաջարկություններ անել, լիովին կամ մասնակի ճանաչել իր պատասխանատվությունը:

7.4.11. կատարել Օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

7.5. Ապահովադիրն իրավունք ունի.

7.5.1. Ապահովագրության Պայմանագրով և սույն Կանոններով սահմանված կարգով ստանալ ապահովագրական հատուցում:

7.5.2. Ապահովագրության ժամկետի ընթացքում ապահովագրության Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողից, դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը: Կրկնօրինակի տրամադրման պահից սկսած կորած պայմանագիրը համարվում է անվավեր:

7.5.3. Ապահովագրողից ապահովագրական հատուցման մերժման դեպքում ստանալ դրա հիմնավորումը և պատճառաբանումը:

7.5.4. Ապահովագրողից պահանջել պարզաբանել սույն Կանոնների և ապահովագրության պայմանագրի դրույթները, հաշվարկները, ապահովագրավճարի վճարման կարգը և այլ դրույթները:

7.5.5. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա):

7.5.6. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների կամ ապահովագրական գործակալի միջոցով:

7.5.7. իրականացնել Օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ

8. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

8.1. Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում այդ մասին Ապահովադիրը կամ Շահառուն պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով պարտավոր են տեղեկացնել Ապահովագրողին:

8.2. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական հատուցումն իրականցվում է Ապահովագրողի կողմից Օրենքին, այլ իրավական ակտերին, Կանոններին և Պայմանագրին համապատասխան՝ հիմք ընդունելով Ապահովադրի (Շահառուի) պահանջը՝ դիմումը, ինչպես նաև վնասի պատճառը և (կամ) չափը հավաստող՝ համապատասխան լիազորված մարմնի (մարմինների) կողմից տրամադրված փաստաթուղթը (փաստաթղթերը):

8.3. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

8.3.1. Ապահովադրի (Շահառուի) կողմից գրավոր դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,

8.3.2. Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),

8.3.3. Ապահովագրողի պահանջով՝ այլ տեղեկատվություն և փաստաթղթեր:

8.4. Ապահովագրողի կողմից հատուցման մերժելու հիմք են հանդիսանում՝

8.4.1. Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որը որակվում է դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն,

8.4.2. Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման վրա,

8.4.3. Օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:

8.5. .Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև Օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:

8.6. Ապահովագրողն, Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում առձեռն, էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին, Ապահովագրված անձին, Շահառուին:

8.7. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ

9.1. Ապահովագրական հատուցման արդյունքում վճարված հատուցման գումարի սահմաններում Ապահովագրողին անցնում է ապահովագրական պատահարի արդյունքում ծագած պահանջի իրավունքը, որն ուներ Շահառուն՝ Ապահովադրի նկատմամբ:

9.2. Շահառուն պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր ապացույցները և փաստաթղթերը, հայտնել իրեն հայտնի ամբողջ տեղեկատվությունը և ձեռնարկել բոլոր միջոցները (մեղավոր կողմի ներկայությամբ վնասված ՏՄ-ն ներկայացնել լրացուցիչ զննության և այլն), որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին իրեն փոխանցված իրավունքների իրացման համար:

9.3. Եթե Շահառուն հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասի համար Ապահովադրի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքի իրացումը Ապահովագրողի կողմից անհնար է դարձել Շահառուի մեղքով, ապա Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցման կամ դրա մի մասի վճարման պարտականությունից և ստանում է ավել վճարած ապահովագրական հատուցման վերադարձի իրավունք:

9.4. Ապահովագրողը հետադարձ պահանջի իրավունք (սուբրոգացիա) ունի Ապահովադրի նկատմամբ, եթե՝

9.4.1. Շահառուն օգտագործել է ապահովագրական հատուցման իր իրավունքը և ստացել է հատուցում,

9.4.2. Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչը կատարել է պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեություն, որը որակվում է դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն.

9.4.3. Ապահովադիրը ներկայացրել է ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ,

9.4.4. Ապահովադիրը հնարավորություն է ունեցել պատշաճ կերպով կատարելու Շահառուի նկատմամբ իր ստանձնած պարտավորությունները, սակայն դրանք չի կատարել կամ կատարել է ոչ պատշաճ կերպով:

9.5. . Ապահովագրողը հետադարձ պահանջի (սուբրոգացիա) իրավունք ունի նաև օրենքով, այլ իրավական ակտերով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Կանոններում և/կամ Պայմանագրում նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ Պայմանագրի կնքման պահին կամ դրա գործողության ընթացքում, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում գործող օրենսդրությանը:

10.2. Ապահովագրողն իրավունք ունի միակողմ՝ առանց Ապահովադրի համաձայնության փոփոխություն և/կամ լրացում կատարելու սույն Կանոններում:

10.3. Կանոններում միակողմանի փոփոխություն և/կամ լրացում կատարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչ ուշ քան 15 օր առաջ այդ փոփոխությունների մասին գրավոր ծանուցել Ապահովադրին:

10.4. Կատարված փոփոխությունների և/կամ լրացումների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովադիրն իրավունք ունի անմիջապես լուծելու ապահովագրության պայմանագիրը:

11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Կանոնների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի շրջանակներում Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1. Սույն Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովադրի (Շահառուի) հասցեին ուղարկված բոլոր ծանուցումները և գրությունները համարվում են պատշաճ ծանուցված, եթե պահպանվել են հետևյալ պայմաններից որևէ մեկը.

12.1.1. Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված հասցեով,

12.1.2. Ծանուցումը ուղարկվել է SMS հաղորդագրությամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա լիազոր անձի կողմից տրամադրած այլ փաստաթղթի մեջ (հայտային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարով,

12.1.3. Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված էլեկտրոնային հասցեով,

12.2. Հասցեների և/կամ վերոնշյալ ռեկվիզիտների փոփոխության դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողին ողջամիտ ժամկետում չեն տեղեկացրել հասցեների և/կամ այլ ռեկվիզիտների փոփոխության մասին, ապա Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները/գրությունները հին հասցեներով/ռեկվիզիտներով համարվում են պատշաճ ծանուցված այն ամսաթվից, երբ այդ ծանուցումները ստացվել են այդ հասցեներում: